Ձև N 5.5.1

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 148

հերթական համարը

*Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքը (Օձուն բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռու-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| *Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը* | *Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը* | Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը) |
|---|---|---|
| *ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի (Օձուն բնակավայրը) 06-112-0442-0005 կադաստրային ծածկագրով 0.35558 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք* | *06-112-0442-0005 կադաստրային ծածկագրով 0.35558 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր* | *Համաձայն միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի* |

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | **Ե. Վարդանյան** |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | **Լ. Առաքելյան** |

Երևան, «20» «ապրլի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրություններով ներկայացված պայմանները (կցվում են):

4. Ալավերդի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Օձուն բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի (Օձուն բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: